# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2022 թվականի նոյեմբերի 16-ից 17-ը Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին**

1. **Անունը, ազգանունը՝**

   Ռուզաննա Կուսիկյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ռիսկերի վերլուծության և կառավարման բաժնի պետ (ժ.թ.պ.)

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Բելգիայի Թագավորություն՝ ք. Բրյուսել, 2022 թվականի նոյեմբերի 16-17

4. **Հրավիրող կողմը՝**

   Համաշխարհային մաքսային կազմակերպություն (ՀՄԿ): Կազմակերպությունը ստեղծվել է 1952 թվականին և հանդիսանում է անկախ միջպետական մարմին, որի նպատակն է մաքսային ծառայությունների արդյունավետության բարձրացումը: Ներկայումս Համաշխարհային մաքսային կազմակերպությունը ներառում է 184 անդամ մաքսային ծառայություն, որոնց ընդհանուր առմամբ բաժին է ընկնում համաշխարհային առևտրի մոտ 98%-ը:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

   Գործուղման նպատակն էր մասնակցել Համաշխարհային մաքսային կազմակերպության կեղծարարության և հեղինակային իրավունքի խախտման Հարցերով աշխատանքային խմբի 19-րդ հանդիպմանը և ելույթ ունենալ դրա շրջանակներում անցկացվող՝ «Ինչպես կառուցել տվյալների էկոհամակարգ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ուժեղացման

նպատակով» թեմայով պանելային քննարկմանը՝ ներկայացնելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի փորձը, ինչպես նաև ծանոթանալ այլ մասնակիցների փորձին և ոլորտի միտումներին:

6. **Քննարկված թեմաները**

- Մտավոր սեփականության իրավունքը խախտող և առողջության ու անվտանգության համար վտանգ ներկայացնող ապրանքների նույնականացման օրինակներ և ռիսկի ցուցիչներ էլեկտրոնային առևտրի շրջանակներում
- Մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքների՝ շրջակա միջավայրի համար անվտանգ եղանակով պահպանման և ոչնչացման ուղեցույցներ
- Համաշխարհային մաքսային կազմակերպության և դրա անդամների կողմից իրականացվող գործողություններ
- STOP III օպերացիա
- Համաշխարհային մաքսային կազմակերպության կեղծարարության և հեղինակային իրավունքի խախտման հարցերով աշխատանքային խմբի 2023–2024 թվականների աշխատանքային ծրագիրը
- «Ինչպես կառուցել տվյալների էկոհամակարգ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ուժեղացման նպատակով» թեմայով պանելային քննարկում
- «Աշխարհագրական նշումների պաշտպանության մասով լավագույն փորձի փոխանակում» թեմայով պանելային քննարկում

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Մասնակցել են «Ինչպես կառուցել տվյալների էկոհամակարգ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ուժեղացման նպատակով» թեմայով պանելային քննարկմանը, որի ընթացքում ներկայացրել է ՀՀ մաքսային մարմինների կողմից մտավոր սեփականության իրավունքների

պաշտպանության գործընթացը, այդ թվում՝ «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» պորտալում գործող Ռիսկերի կառավարման համակարգում տեղայնացված ռիսկի ինքնաշխատ պրոֆիլների հիման վրա իրականացվող հսկողությունը, մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները: Պանելային քննարկման շրջանակներում ՀՀ ՊԵԿ ներկայացուցիչը մասնակցել է նաև տվյալների հավաքագրման, փոխանակման, վերլուծության և ռիսկերի կառավարման թեմաներով քննարկումների, պատասխանել մասնակիցների հարցերին:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Հանդիպման ընթացքում ընդունվել են հետևյալ փաստաթղթերը.

- Համաշխարհային մաքսային կազմակերպության կեղծարարության և հեղինակային իրավունքի խախտման հարցերով աշխատանքային խմբի 19-րդ հանդիպման օրակարգը
- Համաշխարհային մաքսային կազմակերպության կեղծարարության և հեղինակային իրավունքի խախտման հարցերով աշխատանքային խմբի 18-րդ հանդիպման հաշվետվությունը
- «Մտավոր սեփականության իրավունքը խախտող և առողջության ու անվտանգության համար վտանգ ներկայացնող ապրանքների նույնականացման օրինակներ և ռիսկի ցուցիչներ Էլեկտրոնային առևտրի շրջանակներում» փաստաթուղթը
- «Մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքների՝ շրջակա միջավայրի համար անվտանգ եղանակով պահպանման և ոչնչացման վերաբերյալ ՀՄԿ գործնական ուղեցույցների քննարկում»
- Համաշխարհային մաքսային կազմակերպության կեղծարարության և հեղինակային իրավունքի խախտման հարցերով աշխատանքային խմբի 2023–2024 թվականների աշխատանքային ծրագիրը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Միջոցառման մասնակիցները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից մտավոր սեփականության իրավունքի օբյեկտների պաշտպանության նպատակով կիրառվող ռիսկերի կառավարման գործիքակազմի նկատմամբ: Ինչպես Համաշխարհային մաքսային կազմակերպության ներկայացուցիչներից, այնպես էլ այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից և մաքսային ծառայությունների ներկայացուցչներից ստացվել են բազմաթիվ դրական արձագանքներ և համագործակցության առաջարկներ՝ ռիսկերի կառավարման ոլորտում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի փորձի փոխանակման մասով: Մասնավորապես, Համաշխարհային մաքսային կազմակերպությունից ստացվել է առաջարկություն ՀՄԿ ամսագրում ՀՀ ՊԵԿ ռիսկերի կառավարման փորձի մասին հոդված գրելու վերաբերյալ, ինչի ուղղությամբ արդեն քայլեր են իրականացվում: Հոդվածի նախնական տարբերակը պետք է ներկայացվի ՀՄԿ մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

21.11.2022թ.